ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 1

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՖՈՒՏԲՈԼԻ ՖԵԴԵՐԱՑԻԱՅԻ ԿԱՐԳԱՊԱՀԱԿԱՆ ԿՈՄԻՏԵԻ ՆԻՍՏԻ

07 օգոստոսի 2014թ. քաղաք Երևան

ՆԱԽԱԳԱՀՈՒԹՅԱՄԲ՝ Ռ. ՍԻՆՈՅԱՆԻ

ԿԿ-ի անդամներ՝
Ա. Լոպոյան
Ռ. Դալլաքյան
Կ. Նալբանդյան
Հ. Իգիթյան
Ա. Հարությունյան
Բ. Ղալոյան

Օ Ր Ա Կ Ա Ր Գ

1. Մրցումների կազմակերպման և անցկացման բաժանմունքի պետ Ա. Լոպոյանի 06.08.2014թ. զեկուցագրի քննարկումը /զեկուցող Ա. Լոպոյան/

2. Արնար բարեգործական հիմնադրամը 2014-15թթ. առաջնություններին մասնակցության համար հավաստագիրը ներկայացրել է սահմանված ժամկետից ուշ՝ 11.07.2014թ. /զեկուցող Բ. Ղալոյան/

3. Ուլիս ՖԱ ՓԲԸ-ը 2014-15թթ. առաջնություններին մասնակցության համար հավաստագիրը ներկայացրել է սահմանված ժամկետից ուշ՝ 25.07.2014թ. /զեկուցող Բ. Ղալոյան/

4. Ապարանի մ/պ մարզադպրոցը 2014-15թթ. առաջնություններին մասնակցության համար հավաստագիրը ներկայացրել է սահմանված ժամկետից ուշ՝ 04.08.2014թ. /զեկուցող Բ. Ղալոյան/

5. Լ. Արցախ ՖԱ-ը 2014-15թթ. առաջնություններին մասնակցության համար ներկայացրած հավաստագրում 22.07.2014թ.-ին կատարել է փոփոխություն՝ հրաժարվել է Լ. Արցախ-99 թիմի մասնակցությունից՝ ավելացնելով Լ. Արցախ-2000 թիմը /զեկուցող Բ. Ղալոյան/

6. Փյունիկ ՖԱ-ի 2014-15թթ. առաջնություններին մասնակցության համար ներկայացրած հավաստագրում 29.07.2014թ.-ին կատարել է փոփոխություն՝ հրաժարվել է Փյունիկ-3-01 թիմի մասնակցությունից /զեկուցող Բ. Ղալոյան/

7. Գանձասար ՖԱ-ի 2014-15թթ. առաջնություններին մասնակցության համար ներկայացրած հավաստագիրը 29.07.2014թ.-ին չեղյալ է հայտարարել ներկայացնելով նոր հավաստագիր՝ հրաժարվելով 3 թիմի մասնակցությունից /զեկուցող Բ. Ղալոյան/

1. 05/08/14թ. «Գանձասար-2»-«Միկա-2» (ԱԽ14-15002) խաղին չհայտավորված ֆուտբոլիստներ մասնակցելու մասին

ՈՐՈՇԵՑԻՆ՝

05/08/14թ. «Գանձասար-2»-«Միկա-2» (ԱԽ14-15002) խաղին չհայտավորված ֆուտբոլիստներ մասնակցելու համար, ՀՖՖ-ի կարգապահական կանոնակարգի 15-րդ հոդվածի 24-րդ կետի համաձայն՝ «Գանձասար-2» թիմին գրանցել տեխնիկական պարտություն, «Գանձասար» ֆուտբոլային ակումբին տուգանել 50000 դրամ:

2. «Արնար» բարեգործական հիմնադրամի հավաստագիրը ուշացնելու մասին

ՈՐՈՇԵՑԻՆ՝

«Արնար» բարեգործական հիմնադրամի հավաստագիրը ուշացնելու համար, ՀՖՖ-ի կարգապահական կանոնագրքի 18-րդ հոդվածի 32-րդ կետի համաձայն՝ «Արնար» բարեգործական հիմնադրամին տուգանել 5000 դրամ:

3. «Ուլիս» ակումբի հավաստագիրը ուշացնելու մասին

ՈՐՈՇԵՑԻՆ՝

«Ուլիս» ակումբի հավաստագիրը ուշացնելու համար, ՀՖՖ-ի կարգապահական կանոնագրքի 18-րդ հոդվածի 32-րդ կետի համաձայն՝ «Ուլիս» ակումբին հայտարարել զգուշացում:

4. «Ապարանի» մանկապատանեկան մարզադպրոցի հավաստագիրը ուշացնելու մասին

ՈՐՈՇԵՑԻՆ՝

«Ապարանի» մանկապատանեկան մարզադպրոցի հավաստագիրը ուշացնելու համար, ՀՖՖ-ի կարգապահական կանոնագրքի 18-րդ հոդվածի 32-րդ կետի համաձայն՝ Ապարանի մանկապատանեկան մարզադպրոցին տուգանել 17000 դրամ:

5. «Լ. Արցախ» ակումբի հավաստագրում փոփոխություն կատարելու մասին

ՈՐՈՇԵՑԻՆ՝

«Լ. Արցախ» ակումբի հավաստագրում փոփոխություն կատարելու համար, ՀՖՖ-ի կարգապահական կանոնագրքի 18-րդ հոդվածի 32-րդ կետի համաձայն՝ ընդունել ի գիտություն:

6. «Փյունիկ 3-01» թիմի մասնակցությունից հրաժարվելու մասին

ՈՐՈՇԵՑԻՆ՝

«Փյունիկ 3-01» թիմի մասնակցությունից հրաժարվելու համար, ՀՖՖ-ի կարգապահական կանոնագրքի 18-րդ հոդվածի 1-րդ կետի համաձայն՝ «Փյունիկ» ֆուտբոլային ակումբին տուգանել 25000 դրամ:

7. «Գանձասար» ֆուտբոլային ակումբի 3 թիմի մասնակցությունից հրաժարվելու մասին

ՈՐՈՇԵՑԻՆ՝

«Գանձասար» ֆուտբոլային ակումբի 3 թիմի մասնակցությունից հրաժարվելու համար, ՀՖՖ-ի կարգապահական կանոնագրքի 18-րդ հոդվածի 1-րդ կետի համաձայն՝ «Գանձասար» ֆուտբոլային ակումբին տուգանել 75000 դրամ:

ՆԱԽԱԳԱՀ Ռ. ՍԻՆՈՅԱՆ

ՔԱՐՏՈՒՂԱՐ Ա. ԼՈՊՈՅԱՆ